02 հունիսի 2023թ.

Թիվ 01/1 - 131

Հաշվետվություն 05

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի նախագահ
Մարտին Գալստյանին

Հարգելի պարոն Գալստյան,

Համաձայն «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» ՀՀ Կենտրոնական բանկի Կանոնակարգ 4/04 գլուխ 23-ի, կից ներկայացնում ենք էական փաստերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Առդիր՝ 3 թերթ

Հարգանքով՝

Գլխավոր գործադիր տնօրեն՝ Հակոբ Անդրեասյան

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ / "ACBA BANK" OJSC
Կենտրոնական գրասենյակ
Head Office

+374 10 31 88 88
acba@acba.am
www.acba.am

ՀՀ, Երևան, 0002, Արամի 82-84
82-84 Aram st., Yerevan, 0002, RA

Տեղեկացնում ենք, որ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ նաև՝ Բանկ) բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը (այսուհետ նաև՝ Ընդհանուր ժողով) գումարվել է 2023 թվականի մայիսի 25-ին, ժամը 15:00-ին, «ՖՈՒԴՊԱՐԿ ԲԱՅ ԴԱՈՒՆԹԱՈՒՆ» ("FOODPARK BY DOWNTOWN") կենտրոնում (հասցե՝ ՀՀ, 0002, ք.Երևան, Իսակովի 11), սահմանափակ թվով բաժնետերերի ֆիզիկական ներկայությամբ: Ֆիզիկապես չներկայացած բաժնետերերը հնարավորություն են ունեցել մասնակցել տարեկան ընդհանուր ժողովին տեսակապով և քվեարկել առցանց եղանակով կամ քվեաթերթիկի միջոցով:

Ընդհանուր ժողովի կողմից քննարկվել և կայացվել են հետևյալ որոշումները.

1. Բանկի 2022թ. տարեկան շահույթը բաշխելու մասին.

- *Բանկի 2022թ. գործունեության արդյունքում ձևավորված զուտ շահույթից Բանկի բաժնետերերին վճարել ընդհանուր 4,400,000,000 (չորս միլիարդ չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ՝ որպես տարեկան շահութաբաժիններ, այն է՝ յուրաքանչյուր 1 բաժնետոմսի դիմաց 800 (ութ հարյուր) ՀՀ դրամ:*

  Տարեկան շահութաբաժինների վճարումները կատարել 2023թ. հունիսի 1-ից հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում, դրամական միանվագ փոխանցմամբ, «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա՝ 2023 թվականի մայիսի 10-ի, ժամը 15:30-ի դրությամբ Բանկի մասնակիցների ռեեստրում ընդգրկված բաժնետերերին՝ կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցությանը համամասնորեն:

2. Բանկի խորհրդի անդամներին վերանշանակելու մասին.

Տվյալ հարցի շրջանակներում Ընդհանուր ժողովի կողմից կայացվել են հետևյալ որոշումը.

- *Խորհրդի անդամներ Արմեն Մկրտչյանին և Հրաչ Սարգսյանին վերանշանակել մեկ տարով:*

3. Բանկի կանոնադրության նոր խմբագրությունը հաստատելու մասին:

Տեղեկացնում ենք, որ 2023թ. հունիսի 1-ին «ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ-ն ամբողջությամբ մարել է 2021թ.-ի հունիսի 1-ին թողարկված AMACBAB27ER7 թողարկման կորպորատիվ դրամային պարտատոմսերը: Ինչպես նաև վերոնշյալ պարտատոմսերի գծով կատարվել է վերջին՝ չորրորդ արժեկտրոնի վճարում՝ անվանական արժեքի 4.75% չափով:
Հարկ է նշել նաև, որ շրջանառության ժամկետը լրանալու և մարվելու հիմքով, վերոնշյալ պարտատոմսերն ապացուցակվել են նաև Հայաստանի ֆոնդային բորսայի Bbond ցուցակից:

Ընդհանուր մարված պարտատոմսերի անվանական արժեքը կազմել է 2,000,000,000 ՀՀ դրամ:

Տեղեկացնում ենք, որ սույն թվականի մայիսի 30-ին «ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ-ն դիմել է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ, Բանկի՝ ***AMACBAB2BER5*** թողարկման դոլարային պարտատոմսերը Հայաստանի ֆոնդային բորսայի պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում ցուցակելու նպատակով: